ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
<<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն>> ծածկագրով գնանշման հարցման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 նոյեմբերի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Սարգսյանը, Է. Մխիթարյան, Ս. Միրոյան, Գ. Հունանյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրակարգ՝ Ջրային կոմիտեի կարիքների համար Վերականգնվող խորքային հորերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն>> ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Մոդուլ>> ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած <<Մոդուլ>> ՍՊ ընկերության վերաբերյալ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցումը ներկայացվել է 07.11.2019 թվականին:

11.11.2019 թվականին ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը:

Նիստի ընթացքում քննարկվեցին <<Մոդուլ>> ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը: Նշվեց 21.11.2019թ. կայացած նիստում փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները՝ <<Մոդուլ>> ՍՊ ընկերությունը առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել երկու չափաբաժիններում: ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով յուրաքանչյուր չափաբաժնի համար պահանջվել է 2 ինժեներ-հիդրոերկրաբան: <<Մոդուլ>> ՍՊ ընկերության կողմից հավելված 3.1-ով հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների կազմում ներկայացվել է 2 ինժեներ-հիդրոերկրաբանի տվյալներ, որն ապահովում է մեկ չափաբաժնի համար պահանջը: Քննարկման արդյունքում որոշվել է <<Մոդուլ>> ՍՊ ընկերությանն առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

<<Մոդուլ>> ՍՊ ընկերության կողմից 22.11.2019թ. ներկայացվել են լրացուցիչ հիմնավորող փաստաթղթեր:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հիմք ընդունելով մասնակից <<Մոդուլ>> ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները (այդ թվում լրացուցիչ ներկայացված), ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը և գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններում ընտրված մասնակից հայտարարել <<Մոդուլ>> ՍՊ ընկերությանը,
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,
4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակից <<Մոդուլ>> ՍՊ ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Անդամներ _____ Կ. Սարգսյան

_____ Է. Մխիթարյան

_____ Ս. Միրոյան

_____ Գ. Հունանյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան